ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

02.09.2014թ.
223-ի 3

ՀՀ գլխավոր հարկադիր կատարող
պարոն Միհրան Պողոսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Պողոսյան,

Որպես իրավապաշտպան կազմակերպություն՝ "Ինֆորմացիայի ազատության կենտրոն" ՀԿ-ին դիմել են քաղաքացիներ, ում դրամական միջոցների վրա ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության կողմից արգելանք է դրվել՝ ՀՀ Ոստիկանության Ճանապարհային ոստիկանության որոշմամբ սահմանված վարչական տույժի բռնագանձումն ապահովելու համար: ԻԱԿ-ին հայտնել են դեպքեր, երբ քաղաքացիները տեղյակ չեն (պետք է պարզեն), թե ՃՈ ինչ վարչական ակտի հիման վրա է կատարողական վարույթ հարուցվել կամ տեղյակ են, սակայն համաձայն չեն ՃՈ վարչական ակտի հետ եւ սկսում են բողոքարկման գործընթաց: Վերոնշյալ երկու գործընթացներն էլ ժամանակատար են:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Արդյոք քաղաքացին, ում բանկային հաշվի վրա կալանք է դրվել, կենթարկվի՞ լրացուցիչ (հարկադիր կատարման ծառայության վճարից եւ բռնագանձման ենթակա տույժի գումարից բացի այլ) տույժերի, տուգանքների, եթե տեւականորեն չվճարի (բողոքարկման գործընթաց սկսելու կամ երկրում չգտնվելու կամ որեւէ այլ պատճառով) բռնագանձման ենթակա եւ հարկադիր կատարման ծառայության գումարը,
2. Եթե այո, ապա ի՞նչ տույժեր, տուգանքներ, ինչպե՞ս են դրանք հաշվարկվում եւ ո՞ր իրավական ակտերով են սահմանված:

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան